«Մինչև «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի՝ մաքսային մարմնի կողմից սահմանված գործողության ժամկետը լրանալը նշված մաքսային ընթացակարգի գործողության ավարտման հանգամանք սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2026 թվականի _____ N__-Լ

ՄԻՆՉԵՎ «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ (ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ)» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ՝ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԼՐԱՆԱԼԸ ՆՇՎԱԾ ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏՄԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետը և «Մաքսային կարգավորման մասին» օրենքի 99-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 11-ի N 1828-Լ որոշմամբ նախատեսված «Կոնկուրս Մոնդիալ դե Բրյուսել 2026» գինու միջազգային համտես-մրցույթի անցկացման օրերի ընթացքում Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի

նախարարության կողմից Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին ներկայացված ցանկի հիման վրա, գինու յուրաքանչյուր արտիկուլի համար երեք հատ առավելագույն քանակով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող գինիների նշված մրցույթի ընթացքում սպառումը (օգտագործումը) հանդիսանում է մինչև «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի՝ մաքսային մարմնի կողմից սահմանված գործողության ժամկետը լրանալը նշված մաքսային ընթացակարգի գործողության ավարտման հանգամանք։

2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված հանգամանքի հաստատման համար հիմք է հանդիսանում Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից «Կոնկուրս Մոնդիալ դե Բրյուսել 2026» գինու միջազգային համտես-մրցույթի ավարտից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին տրամադրված՝ գինիների սպառման (օգտագործման) վերաբերյալ տեղեկատվությունը։

3. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված մաքսային ընթացակարգի ավարտը ձևակերպվում է մաքսային մարմնի կողմից երկու աշխատանքային օրվա ընթացքում մաքսային հայտարարագրման էլեկտրոնային համակարգում համապատասխան նշում կատարելու միջոցով, որից հետո ապրանքները ստանում են Եվրասիական տնտեսական միության ապրանքի կարգավիճակ։

4. «Կոնկուրս Մոնդիալ դե Բրյուսել 2026» գինու միջազգային համտես-մրցույթի ընթացքում չսպառված (չօգտագործված) գինիների նկատմամբ կիրառված «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 224-րդ հոդվածին համապատասխան։

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը և ուժը կորցրած է ճանաչվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 11-ի N 1828-Լ որոշման հավելվածով հաստատված միջոցառումների ծրագրի 8-րդ կետով նախատեսված մոնիթորինգի արդյունքները Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ներկայացնելու օրվան հաջորդող օրը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ